

«Միխիթար Սեբաստացի» կրթահամալիր

Օտար լեզուներ 1-9-րդ դասարաններ

Օտար լեզվի 1-9-րդ դասարանների առարկայական ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) հիմնվում է «Միխիթար Սեբաստացի» կրթահամալիրում իրականացվող «Ստեղծողի մոբիլ դպրոց» հեղինակային (պետական այլընտրանքային) կրթական ծրագրի վրա, ըստ որի օտար լեզուները, մեդիամիջոցներն ու համացանցը ուսուցանվում և գործածվում են առաջին դասարանից. ապահովվում են օտար լեզուների ամենօրյա պարապմունքներ, համակարգչի և թվային այլ միջոցների ամենօրյա գործածում: Ծրագիրը հիմնված է «Հանրակրթության պետական չափորոշիչների» վրա: Ուսումնական տարվա ընթացքում կոկրտետ դասարանում իրականացվող ուսումնական նախագիծը հրապարակվում է դասավանդողի բլոգում, Ծրագրի բովանդակային ներդրի հավելվածն է: Նախագծերի ընթացքն ու արդյունքները ներկայացվում են սովորողի և դասավանդողի բլոգում, ենթակայքում: Օտար լեզվի նախագծերը կարող են հիմնված լինել կրթահամալիրի ուսումնական օրացույցի, օտար լեզվի առարկայական օրացույցի, ինչպես նաև օտար լեզվի առարկայան պահանջներից բխող թեմաների վրա: Իրականացվում են նաև միջազգային կրթական ծրագրեր և նախագծեր:

Հիմնական դպրոցի 1-9-րդ դասարանների ծրագիրը բաժանված է ըստ կրթական աստիճանների՝ 1-3-րդ դասարան, 4-5-րդ դասարան և 6-9-րդ դասարան:

1-3-րդ դասարանների առարկայական ծրագիր

1-3-րդ դասարաններում օտար լեզվի դասընթացն իրականացվում է «Իմացումի հրճվանք» ծրագրի շրջանակում, ուսումնական նախագծերը մշակվում և իրականացվում են դասվարի մասնակցությամբ:

Առարկայի ուսուցման նպատակը

Կրտսեր դպրոցում օտար լեզվի դասավանդման հիմնական նպատակն է սովորողի մոտ խոսակցական, հաղորդակցական լեզվի, օտար լեզվով միմյանց հետ շփվելու, օտար լեզվով բանավոր խոսքի ընկալման հմտությունների ձևավորումն ու զարգացումը: Կարևոր խնդիր և նպատակ է նաև ստացած գիտելիքների և հմտությունների գործածման կարողության զարգացումը: Այս տարիքից դրվում են նաև քերականական, հնչունաբանական, շարահյուսական գիտելիքների հիմքերը:

Առարկայի ուսուցման խնդիրները

Առաջին դասարանում իրականացվում է սովորողի ծանոթացում-ընտելացումը նոր, իր համար գրեթե լիովին անծանոթ լեզվին: Այս տարիքում այդ ծանոթացումը հիմնականում իրականացվում է երգերի, մուլտֆիլմերի, խաղերի միջոցով: Դասավանդման առաջին իսկ տարվանից դասերը պետք է անցկացվեն անգլերեն: Դրա համար անհրաժեշտ է աստիճանաբար և հետևողականորեն ամեն օր ներմուծել մեկ-երկու առօրյա արտահայտություն, դրանք անընդհատ գործածել և կրկնել: Դասարանային բոլոր գործողությունները աստիճանաբար արտահայտվելու են միայն անգլերեն: Դասավանդողը անգլերեն խոսելիս պետք է հստակ գիտակցի, որ ուսուցանվող նյութը պետք է համապատասխանի երեխայի մայրենի լեզվով ունեցած գիտելիքներին: Տառաձևաչափությունն ամփոփվում է 2-րդ դասարանի վերջում: Սովորողները օտար լեզվի մեկ տարվա ուսուցման բոլոր մեթոդների շնորհիվ (համակարգչի ստեղծագործություններ, երգերի և ոտանավորների կարաոկե,

համակարգչային ուսումնական խաղեր և այլն) ճանաչում են բոլոր տառերը: Մինչ այդ նրանք արդեն ծանոթ են լինում անգլերեն հնչյուններին «Jolly phonics» մեթոդի շնորհիվ:

Երկրորդ դասարանից սկսած սովորողը ձեռք բերած տառաճանաչության հիմքերը ամրապնդում է ընթերցման շնորհիվ:

1-ին դասարան

1. Ձևավորել սովորողի՝ օտար լեզվի մասին տարրական պատկերացում-երգերի, ոտանավորների, պարզ, առօրեական հարց ու պատասխանի միջոցով:
2. Զարգացնել լսելու, հասկանալու և խոսելու հմտությունները.
 - լսել և հասկանալ դասավանդողի պարզ խոսքը
 - լսել և կատարել ուսուցչի հրահանգները
 - լսել և հասկանալ պարզ մանկական երգեր
 - լսել և հասկանալ պարզ, առօրեական երկխոսություններ
 - լսել և ճիշտ պատասխանել հարցերին
 - կարողանալ վարել փոքր երկխոսություններ:
3. Ձևավորել սովորողի տարիքին համապատասխան բառապաշար:
4. Կիրառել SՀS-ներ (համակարգիչ, էլ.գրատախտակ, համացանց)՝ դասավանդողի օգնությամբ: Սովորողները կարողանում են ինքնուրույն բացել խաղերի, նյութերի թղթապանակները, ընտրել խաղը, խաղալ: Ուսուցչի օգնությամբ գտնում են անհրաժեշտ կայքը, ընտրում խաղը, դասը, երգը, կատարում այն:
5. Սովորեցնել քերականական անհրաժեշտ տարրեր՝ առանց դրանք անվանելու:

2-րդ դասարան

1. Ձևավորել սովորողի՝ օտար լեզվի տառերի և հնչյունների մասին պատկերացում:
2. Զարգացնել լսելու, ունկնդրելու կարողությունները:
3. Զարգացնել օտար լեզվով խոսելու հմտությունները:
4. Ընդլայնել բառապաշարը:
5. Կիրառել SՀS-ներ (համակարգիչ, էլ.գրատախտակ, համացանց)՝ դասավանդողի օգնությամբ: Սովորողները ինքնուրույն գտնում են խաղերը, գիտեն անհրաժեշտ ուսումնական կայքերի հասցեները, բացում են դրանք, ընտրում նյութը, կատարում: Կարողանում են լուսանկարել:
6. Սովորեցնել քերականական անհրաժեշտ տարրեր, առանց դրանք անվանելու:

3-րդ դասարան

1. Զարգացնել խոսելու հմտությունները:
2. Զարգացնել գրելու հմտությունները:
3. Ընդլայնել բառապաշարը:
4. Զարգացնել ընթերցման և ունկնդրման հմտությունները:
5. Զարգացնել սովորողի՝ իր գիտելիքներն ու հմտությունները կիրառելու կարողությունը: 6. Կիրառել SՀS-ներ (համակարգիչ, էլ.գրատախտակ, համացանց, ֆոտոխցիկ, ձայնագրիչ)՝ դասավանդողի օգնությամբ և ինքնուրույն: Սովորողները ինքնուրույն բացում են անհրաժեշտ կայքերը, ընտրում նյութերը, կատարում: Լուսանկարում են, ձայնագրում, արված նյութը ներբեռնում համակարգչում: Կարողանում են էլեկտրոնային փոստից ներբեռնել ֆայլեր:

6. Սովորեցնել քերականական անհրաժեշտ տարրեր՝ տալով որոշակի պարզաբանումներ:

4-5-րդ դասարաններ

Առարկայի ուսուցման նպատակը

Օտար լեզվով շփվելու, հաղորդակցվելու հմտությունների և կարողությունների զարգացում՝ ըստ խոսքային գործունեության չորս ուղղությունների.

1. Ունկնդրում

- ընկալել և հասկանալ ուսուցչի հրահանգները
- հասկանալ ուսուցչի և ընկերների խոսքը,
- լսել և հասկանալ բանավոր մշակված խոսքը, որը կպարունակի մեկ-երկու անձանոթ բառ:

2. Խոսել

- վարել փոքր երկխոսություններ իրենց ծանոթ թեմաների շուրջ
- փոխանակել մեկ-երկու նախադասություն իրեն ծանոթ իրադրության մեջ
- արտահայտել հարցեր, խնդրանք, տալ պատասխաններ:

3. Ընթերցել

- ընթերցել պարզ տեքստեր՝ ընկալելով դրանց ընդհանուր իմաստը՝ առանց բառանի օգնության
- կարողանալ բարձրաձայն կարդալ փոքր տեքստեր՝ պահպանելով առոգանության, հնչերանգի, շեշտադրության հիմնական կանոնները:

4. Գրել

- կազմել և գրել նախադասություններ ծանոթ խոսքային նմուշներով՝ օգտագործելով անցած բառերը
- գրել փոքր շարադրություններ, շնորհավորական բացիկներ
- լրացնել թեստեր, կատարել գրավոր վարժություններ:

Ծրագրի խնդիրները.

4-րդ դասարան

1. Ջարգացնել խոսելու հմտությունները:
2. Ջարգացնել գրելու հմտությունները:
3. Ընդլայնել բառապաշարը:
4. Ջարգացնել ընթերցման և ունկնդրման հմտությունները:
5. Ջարգացնել սովորողի՝ իր գիտելիքներն ու հմտությունները կիրառելու կարողությունը:
6. Միջառարկայական կապ ստեղծել այլ առարկաների հետ (մայրենի, մաթեմատիկա, տեխնոլոգիա, երգ և այլն):

7. Կիրառել S2S-ներ (համակարգիչ, էլ.գրատախտակ, համացանց ֆոտոխցիկ, ձայնագրիչ)՝ ինքնուրույն: Ինքնուրույն կարողանում են լուսանկարներից և ձայնային ֆայլերից պատրաստել ֆիլմեր պարզ ծրագրերով (Movie Maker), կիրառել SkyDrive-ը, ուսուցչի օգնությամբ պատրաստել կարտոկե, բացել ծանոթ ուսումնական կայքեր, կատարել առաջադրանքներ:
8. Սովորեցնել անհրաժեշտ քերականական տարրեր՝ տալով որոշակի պարզաբանումներ:

5-րդ դասարան

1. Ձարգացնել խոսքը:
2. Ձարգացնել գրելու հմտությունները:
3. Ընդլայնել բառապաշարը՝ ավելացնելով տարբեր դարձվածաբանական արտահայտություններ, ասացվածքներ և այլն:
4. Ձարգացնել ընթերցման և ունկնդրման հմտությունները:
5. Ձարգացնել սովորողի՝ իր գիտելիքներն ու հմտությունները կիրառելու կարողությունը:
6. Միջառարկայական կապ ստեղծել այլ առարկաների հետ /մայրենի, մաթեմատիկա, տեխնոլոգիա, երգ և այլն/
7. Կիրառել S2S-ներ (համակարգիչ, էլ.գրատախտակ, համացանց, ֆոտոխցիկ, ձայնագրիչ)-

ինքնուրույն: Սովորողը ինքնուրույն օգտագործում է ֆոտոխցիկը, ձայնագրիչը, կարողանում է վերցնել հարցազրույցներ, խմբագրել աուդիո և ֆոտո ֆայլեր, տեղադրել դրանք կայքում

8. Սովորեցնել տարիքին համապատասխան քերականական տարրեր, պարզաբանելով դրանք:

6-րդ դասարան

1. Ձարգացնել խոսքը:
2. Ձարգացնել գրելու հմտությունները:
3. Ընդլայնել բառապաշարը՝ ավելացնելով տարբեր դարձվածաբանական արտահայտություններ, ասացվածքներ և այլն:
4. Ձարգացնել ընթերցման և ունկնդրման հմտությունները:
5. Ձարգացնել սովորողի՝ իր գիտելիքներն ու հմտությունները կիրառելու կարողությունը:
6. Միջառարկայական կապ ստեղծել այլ առարկաների հետ (մայրենի, մաթեմատիկա, տեխնոլոգիա, երգ և այլն):
7. Կիրառել S2S-ներ (համակարգիչ, էլ.գրատախտակ, համացանց, ֆոտոխցիկ, ձայնագրիչ)՝ ինքնուրույն: Սովորողը պատրաստում է տեսաֆիլմեր տարբեր ծրագրերով, նյութերը տեղադրում Youtube-ում, հղումը՝ կայքում:
8. Սովորեցնել անհրաժեշտ քերականական տարրեր՝ պարզաբանելով դրանք:

Ուսումնական միջավայր և կազմակերպվող գործունեության ձևերը

Ուսումնական միջավայրը կարող է տարբերվել՝ կախված դասի նպատակից, եղանակային պայմաններից և կազմակերպման ձևից: Ուսումնական տարածք կարող են լինել.

1. Կրթահամալիրի ընթարձակ, թափանցիկ և լուսավոր կաբինետները, որոնք ապահովված են էլ. գրատախտակով, պրոյեկտորով, համակարգչով, անլար ինտերնետով: Այստեղ կարելի է կազմակերպել.

- դասեր
- դաս-խաղեր
- ընթերցում
- գրավոր աշխատանքներ
- աշխատանք համակարգչով
- աշխատանք էլ. Գրատախտակով:

2. Ընթերցասրահ-ակումբներ

- ընթերցանություններ
- ֆիլմերի դիտում
- հանդիպումներ կրթահամալիրի հյուրերի հետ
- քննարկումների կազմակերպում:

3. Ներքին և արտաքին բակերը

- տարվա յուրաքանչյուր եղանակին բնորոշ խաղեր կազմակերպելու համար
- ուսումնա-հասարակական աշխատանքներ
- բացօթյա դասեր –ընթերցում, ունկնդրում, դերախաղեր, բակային խաղեր

4. Ցուցասրահներ

- աշխատանքների ներկայացում
- միջոցառումների կազմակերպում
- հանդեսների փորձեր
- խաղերի կազմակերպում

5. Մարզական դահլիճներ

- օտար լեզվով հրահանգներով մարզանքի համար
- սպորտային միջոցառումներ, օլիմպիկներ (նույնպես օտար լեզվով)

6. Խոհանոց-լաբորատորիաներ

- թեմատիկ բառապաշարի գործածման հմտությունների զարգացման համար (սնունդ, խոհանոցային գործողություններ)
- ծիսական ուտեստների պատրաստման ընթացքում օտար լեզվի գործածման համար (գործողությունները տեսագրվում են և ներկայացվում տեսաֆիլմի կամ ֆոտոֆիլմի տեսքով):

7. Տեխնոլոգիական լաբորատորիաներ

- աշխատանք կավագործության լաբորատորիայում
- աշխատանք դիզայնի, կերպարվեստի սրահներում:

8. Մեդիա-դահլիճ

- օտար լեզվով թատերական ներկայացումներ դիտելու կամ ներկայացնելու համար:

Ուսուցման վիրտուալ միջավայր

Կրթահամալիրը իրականացնում է մեդիակրթություն, և առաջին իսկ դասարանից սովորողները հմտանում են S2S-ների կիրառման գործընթացում: S2S-ների խորացված ուսուցումը պահանջում է ուսուցման որոշակի վիրտուալ տարածք կամ միջավայր: Դրանցից են.

1. Live@Edu համակարգի էլ.փոստեր (էլ.փոստ ուեն նաև սովորողների ծնողները), որոնք սովորողները սովորում են ինքնուրույն կիրառել: Էլ.փոստով սովորողները և դասավանդողները կարող են.
 - ստանալ տնային առաջադրանքներ
 - ուղարկել կատարած տնային առաջադրանքը
 - առաջադրանքները ստանալ էլ.փոստի օրացույցով, որը մինչև կատարման ժամկետը հիշեցումներ կուղարկի սովորողին:
2. 4-րդ դասարանից սովորողը արդեն ունենում է իր անձնական բլոգը, որի կառավարումը պահանջում է օտար լեզվի գիտելիքների որոշակի պաշար:
3. Դասավանդողի անձնական բլոգը (պարտադիր է կրթահամալիրի բոլոր

դասավանդողների համար): Դասավանդողները նյութեր են տեղադրում բլոգներում, առցանց քննարկումներ կազմակերպում օտար լեզվով և այլն:

4. Կայքը և ենթակայքերը, որտեղ սովորողները դասավանդողի, ծնողի օգնությամբ կամ ինքնուրույն օտար լեզվով նյութեր են տեղադրում: Նյութերը կարող են լինել նաև խմբային, դասարանական: Ենթակայքերում այդ նպատակի համար ստեղծված են հատուկ տարածք-բաժիններ՝ ուրախ օտար լեզու, ուրախ կարտուկեկներնագրերով: Այստեղ տեղադրվում են սովորողների, դասավանդողների լավագույն աշխատանքները, ուսումնական խաղեր, ինտերնետ ռեսուրսներ:
5. Բոլոր ուսուցանվող երգերը թարգմանվում են Lingvo, Google Translator կամ համակարգչում առկա այլ բառարանների և ծրագրերի օգնությամբ: Դասարանում թարգմանությունը կատարում են սովորողները՝ դասավանդողի հսկողությամբ: Այնուհետ երգի կամ ոտանավորի բառերը ուղարկվում են բոլոր սովորողների հասցեներին, նրանք տանը կրկին ընթերցում, սովորում են դրանք:

Աշխատանքային նյութեր

Դասագրքեր, որոնց թվայնացված տարբերակները տեղադրված կլինեն գրադարանի ենթակայքում www.gradaran.mskh.am, ինչպես նաև ներբեռնված կլինեն համակարգչում, դասավանդողի և սովորողի անհատական նոութբուք-նեթբուքներում, բլոգներում:

Բովանդակություն

I դասարան		
Ուսուցանվող նյութ	Ուսուցանման համար առաջարկվող նյութեր	Քերականություն

<ul style="list-style-type: none"> • Ողջույնի ձևեր Hello, Hi, Good morning, good afternoon, good evening, good night, goodbye, bye-bye. • Ծանոթություն What's your name? • How old are you? How are you? • Գործողություններ Stand up, sit down, sing, play, count, listen, look, • Թվական 1-10-ը 	<ul style="list-style-type: none"> • Երգեր, ոտանավորներ, դասարանական հրահանգներ. ♪ Hello, hello, let's sing hello, hello, Stand up, sit down, let's sing hello, hello, Good bye, good bye, let's sing good bye, good bye. ♪ Good morning, I am your teacher, Good morning you are my students, Good morning, what's your name? My name is..... Please, stand up, please, sit down, Please, stand up, please sit down, Good morning... • ♪ One, two, three, four, five Let's count, let's count and sing Six, seven, eight, nine, ten, • Let's sing this song again. • ♪ Happy birthday, happy birthday • How old are you? How old are you? • Five or six or seven? Five or six or seven? • How old are you? How old are you? 	<ul style="list-style-type: none"> • Հոդ (a, an, the) Գոյական /թիվ—s, որոշ բացառություններ—man-men, woman-women, child-children, mouse-mice, sheep-sheep/ Ընտանիք /գույն, չափ, ձև/ Դերանուն /անձնական-, ստացական, հարցական /what, who/ • Նախադիր /in, on, under, at, to- ուղղություն/ • Բայ-ժամանակաձևներ կա անորոշ, ներկա շարունակական: Պարզ նախադասություններ, առօրյա պարզ գործողությունների նկարագրեր • /քերականական այս պարզաբանումները ահրաժեշտ են դասավանդողին, սովորողը այս ամենը կիրառում է դեռ առանց գիտակցելու, մեխանիկորեն/
<ul style="list-style-type: none"> • Իմ շրջապատը, շրջապատող առարկաներ My classroom, door, window, picture, computer, whiteboard, pen, pencil, book, bag. • Իմ ընտանիքը. Mother, father, brother, sister, • Խաղալիքները 	<ul style="list-style-type: none"> • & Mother, father, sister, brother, One, two, three, four We are the family of four. ♪ «Teddy Bear» ♪ One and two and three and four • I am sitting on the floor, • I am playing with my ball • And a pretty little doll.... (car-star, dog- 	
<ul style="list-style-type: none"> • Toy, teddy bear, doll, ball, car, bicycle,- • Գործողություններ Open, close, watch, draw, 	<ul style="list-style-type: none"> • frog, hen-pen, house-mouse, hare-bear...) 	

<ul style="list-style-type: none"> • Արտաքին տեսքի պարզ նկարագրություն The parts of the body, clothes (shirt, skirt, hat, shoes, boots, cap, jacket). Have got 	<p>♪ Head and shoulders, knees and toes... One head, one nose, two eyes, (3) And one, two, three, four, five. Two arms, two hands, two legs (3) And one, two, three, four, five.</p>	
<ul style="list-style-type: none"> • Գույներ Colours 	<p>♪ «Colours of the rainbow» ♪ «My box of colours»</p>	
<ul style="list-style-type: none"> • Կենդանիներ Animals (domestic, wild) Dog, cat, mouse, horse, cow, sheep, goose, duck, hen, pig, rabbit, hare, bear, wolf, fox 	<p>♪ There was a farmer, who had a dog And Bingo was its name. (B-I-N-G-O) There was a farmer, who had a cat, And Nabee was its name. (N-A-B-E-E) There was a farmer, who had a bird, And Cucoo was its name (C-U-C-O-O). • ♪</p>	
<ul style="list-style-type: none"> • Տոներ Birthday, New Year, Mother's day, Christmas, Easter 	<p>♪ Happy birthday, happy birthday How old are you? How old are you? Five or six or seven? Five or six or seven? How old are you? How old are you? ♪ New year songs</p> <p>& Father Frost, Father Frost, Bring many toys</p> <p>For little girls and little boys.</p> <ul style="list-style-type: none"> • ♪ «Have you seen the Easter bunny?» • ♪ «Lady Bug, Lady Bug.» • & «My dear, dear, mummy» 	
<ul style="list-style-type: none"> • Մրգեր, բանջարեղեն, սնունդ Food, meals Apple, orange, banana, apricot, peach, pear, plum, grapes, tomato, potato, 	<p>♪ I like apples, I like apples, What's about you? What's about you? Strawberry, banana, Strawberry, banana, I like apples, too, I like apples, too. • & One, two, three-let me see</p>	
<ul style="list-style-type: none"> cucumber, onion Ice-cream, candy, chocolate, sandwich, juice, milk, water, tea, 	<p>Who likes coffee, who likes tea.</p>	

coffee- Իմ նախասիրությունները I like/I don't like		
• Զգացմունքի/վիճակի պարզ նկարագրություն Emotions/feelings- I am happy, I am sad- I am hungry, I am tired		
II դասարան		
Ուսուցանվող նյութ	Ուսուցանման համարառաջարկվող նյութեր	Քերականություն
• Ծանոթություն Կրկնողություն What's your name? How old are you? How are you? Լոր նյութ Where are you from? Interrogative sentences: How many...? Do you like...? What do you like? Have you got...? • Թվական` տասնյակներ, • 100		• Հոդ /a, an, the/ Գոյական /թիվ—s, -ss որոշբացատրություններ-knife- knives, wolf-wolves, shelf- shelves/ • Հաշվելի- անհաշվելի գոյականներ- milk, water, snow, bread, etc. • Ստացական հոլով- <u>s</u> • Ածական /գույն, չափ, ձև, որակ/ • Դերանուն /անձնական, ստացական, հարցական /what, who/ • Նախդիր /in, on, under, at, to, near, / • Բայ-ժամանակաձև- ներկյա անորոշ, ներկա շարունակական պարզ նախադասություններ, առօրյա պարզ գործողությունների նկարագրեր
• Իմ շրջապատը, շրջապատող առարկաներ		

<p>Կրկնողություն- Classroom, my room, school yard, my playground, Իմ ընտանիքը- Կրկնողություն- Grannies, uncle, aunt</p>		
<p>• Խաղալիքները Կրկնողություն- Chess, computer games, outdoor games,</p>		
<p>• Արտաքին տեսքի պարզ նկարագրություն Կրկնողություն- Tall, short, big, little, small, description of the face, dress,</p>		
<p>• Զգացմունքի/վիճակի պարզ նկարագրություն- Կրկնողություն- Emotions/feelings- I am thirsty, I am ill, I am busy, I am surprised, I am angry, I am glad</p>		
<p>III-IV դասարանն և II դասարաններում ուսուցանվող բոլոր թեմաները կրկնվում են 3-4-րդ դասարաններում՝ բառապաշարի ավելացմամբ, ինչպես նաև ավելանում են ստորև բերված թեմաները Դասավանդումը անցկացվում է նաև արդեն դասագրքերով:</p>		
<p>Ուսուցանվող նյութ</p>	<p>Ուսուցանման համար առաջարկվող նյութեր</p>	
<p>• Տարվա եղանակներ, ամիսներ, շաբաթվա օրեր- Բնակավայրը, բնակարան, սենյակ- Մասնագիտություններ- Նախասիրությունները /ազատ ժամանակ/- Ուսումնական</p>	<p>• Ուսուցման համար առաջարկվող նյութերը՝ դասագրքերից, ուսումնական կայքերից</p>	<p>• Հոդ /a, an, the/- Գոյական /եզակի-հոգնակի- թիվ, հոգնակի թվի բացառությունները, /, գոյականի ստացական հոլովը -'s, հաշվելի անհաշվելի գոյականներ Ածական / Ածական /գույն, չափ, ձև,-</p>

<ul style="list-style-type: none"> • առարկաներ • Մնունդ /նախաճաշ, ճաշ, ընթրիք/ • Օրվա նկարագիր Ազգականներ Ժամացույց, ժամանակ, գումարում, հանում • Բնության, շրջապատի պարզ նկարագրեր • Զգացմունքներ 		<p>ակ/• Բայ /կանոնավոր-անկանոն բայեր/, Անցյալ անորոշ, Ապառնի- պարզ նկարագրություններ,</p> <p>• Մոդալ բայեր /can, may, must/ Դերանուն /անձնական, ցուցական-this-these, that-those, հարցական, ստացական/</p> <p>Նախդիր-/in, on, under, at, to, near, above, behind, next to, in front of, /</p> <p>Մակբայ /-ly /</p> <p>Թվական /քանակական և դասական/</p> <p>•</p>
---	--	---

5-րդ դասարան

Թեմաներ

- Ես և իմ շրջապատը
- Ես, իմ ընկերները, իմ բարեկամները
- Իմ ընտանիքը
- Իմ պարտականությունները
- Իմ բնակարանը
- Դպրոց
- Դպրոցական առօրյա
- Նախասիրություններ, իմ սիրած զբաղմունքը
- Հագուստ
- Գնումներ
- Տարվա եղանակներ և դպրոցական արձակուրդ
- Ճանապարհորդություն (ուսումնական ճամփորդություններ, ճամբարներ)

Տոներ

Միսիթար Սեբաստացու օրեր

Նոր տարի

Սուրբ Ծննդյան տոներ

Զատիկ

Զոն

Երեխաների պաշտպանության օր

5-րդ դասարանի ուսումնական տարվա վերջում սովորողները ձեռք են բերում հետևյալ խոսքային կարողությունները.

Ունկնդրելու և խոսելու կարողությունները.

- կարողանալ հասկանալ և տալ տեղեկատվություն, երբ հարցնում են անունը, ազգանունը, տարիքը և հասցեն
- կարողանալ հասկանալ կարճ նկարագրության ընդհանուր միտքը և տալ տեղեկություն այդ մասին
- կարողանալ հասկանալ գործողությունների պարզ հրահանգներ և տալ նման հրահանգներ, օրինակ՝ կանգնիր, թեքվիր աջ, թեքվիր ձախ, առաջ/հետ գնա
- կարողանալ հասկանալ ծանոթ թեմայով մի որևէ մուլտֆիլմի գլխավոր միտքը և տալ կարճ տեղեկություն այդ մասին
- կարողանալ ներկայացնել ինքն իրեն, ընտանիքի անդամներին և ընկերներին
- կարողանալ գրուցել դպրոցի, առօրյայի մասին
- կարողանալ գրուցել սիրելի գրադմունքի մասին
- կարողանալ ողջունել և հրաժեշտ տալ օրվա տարբեր ժամերի համար բնորոշ արտահայտություններով
- կարողանալ շնորհակալություն հայտնել և պատասխանել շնորհակալությանը
- կարողանալ ընդունել առաջարկությունը, օգնությունը, կամ էլ բարեկիրթ ձևով մերժել դրանք

Ունկնդրելու և խոսելու ուսումնական գործունեության ձևերը S2S միջոցների օգտագործմամբ

- Դասավանդողը էլեկտրոնային գրատախտակի վրա ներկայացնում է իր նախապես կազմած երկխոսության սկիզբը, և սովորողները շարունակում են ու ավարտում այն :
- Չթարգմանված մուլտֆիլմ դիտելուց հետո սովորողները պատասխանում են այդ մուլտֆիլմի ընդհանուր բովանդակությանը վերաբերող հարցերին:

Ընթերցելով հասկանալու կարողությունները

- կարողանալ հասկանալ և կարճ ձևով տալ տեքստի գլխավոր տեղեկությունը և գաղափարը
- կարողանալ կարդալ և հասկանալ անձնական քարտի կետերի պահանջները, որոնք պետք է լրացնել
- կարողանալ հասկանալ ընթերցվող տեքստի (պարզ նկարագրություն, պարզ տեղեկատվություն, հայտարարություն, գովազդ, մանկական երգեր և ոտանավորներ, կարճ պատմվածքներ և երկխոսություններ) ընդհանուր բովանդակությունը
- կարողանալ տարբերել ընթերցվող նյութի գործողությունների ժամանակային հղումները՝ ներկա, ներկա շարունակական, անցյալ և ապառնի
- կարողանալ կռահել տեքստում առկա երկու-երեք անձանոթ բառերի իմաստները տեքստի ընդհանուր մտքից

Ընթերցելով հասկանալու ուսումնական գործունեության ձևերը S2S միջոցների օգտագործմամբ

Բացի հիմնական դասագրքում ներկայացված տեքստերից՝ դասավանդողը նախապես ընտրում է դասարանի սովորողների լեզվական կարողություններին համապատասխան տեքստեր տարբեր աղբյուրներից (գրքեր, կրթական կայքեր):

Գրելու կարողությունները

- կարողանալ լրացնել անձնական քարտ հետևյալ կետերով. անուն, ազգանուն, ծննդյան տարեթիվն ու ամիս- ամսաթիվը, ծննդյան տեղը, ծնողների անունները, դպրոցը, հայրենի քաղաքը կամ գյուղը, հասցեն և հեռախոսի համարը
- կարողանալ կազմել և գրել նախադասություններ տրված բառերով և բառակապակցություններով
- կարողանալ հասկանալ և գրել անձնական կարճ նամակներ, որոնք վերաբերում են առօրյային, դպրոցին կամ սիրելի զբաղմունքին
- կարողալ և տեքստից հանել անհրաժեշտ տեղեկատվությունը:

Գրելու ուսումնական գործունեության ձևերը ՏՀՏ միջոցների օգտագործմամբ

- Էլեկտրոնային նամակագրություն անգլախոս կամ այլ երկրներում ապրող հասակակիցների հետ:(բովանդակությունը` դպրոցական և առօրյա կյանքի պարզ նկարագրություն)
- Կրթահամալիրային կայքում դպրոցական կամ առօրյա կյանքի պարզ նկարագրություններով անգլերեն նյութի տեղադրում դասավանդողի օգնությամբ

Ուղղախոսություն

Անգլերենի հնչյունագրության նշանները սովորողներին են ներկայացվում 7-րդ դասարանում :

5-6-րդ դասարաններում սովորողները հնչյունների, երկբարբառների, վանկերի և բառերի ճիշտ արտասանությունը, շեշտադրումը սովորում են լսելով և կրկնելով դասավանդողի և ձայնագրությունների, աուդիոդասերի ճիշտ արտասանությունները:

Բառապաշարը

Սովորողի վերարտադրողական բառապաշարը ավելանում է 100-120 նոր բառերով: Բառերը, եթե հնարավոր է, ներկայացվում են անգլերեն բացատրություններով, իսկ եթե` ոչ, տրվում է հայերեն թարգմանությունը: Բառերը ներկայացվում են իրենց բնորոշ խոսքային իրադրություններում` բառակապակցություններով և նախադասություններով:

Քերականություն

Ձևաբանություն

Գոյական (The Noun)

ա) կրկնություն. Գոյականի հոգնակի թվի կազմումը –s և -es վերջավորությունների միջոցով

բ) Կրկնություն. man, woman, child, tooth և foot գոյականների հոգնակի թվի կազմումը

գ) Կրկնություն. հոդերի գործածումը մի քանի կայուն կապակցությունների հետ. a lot of, a great many, go for a walk, in the evening, in the afternoon, in the morning, at night, go to bed, go to school

Ածական (The Adjective)

ա) Կրկնություն. ածականների համեմատության աստիճանների կազմումը -er, -est, more, most վերջավորությունների և բառերի օգնությամբ

բ) Կրկնություն. many, much, good, bad և little ածականների համեմատության աստիճանների կազմումը

գ) as ... as, not so .. as համեմատական կառուցվածքները

Մակբայ (The Adverb)

Far և a long way, too և also, quickly և slowly

Դերանուն (The Pronoun)

Կրկնություն. անձնական, ստացական, ցուցական, հարցական և some և any անորոշ դերանունները

Նախդիր (The Preposition)

About, after, with, till, behind

Բայ (The Verb)

ա) կրկնություն. ներկա շարունակական ժամանակը (The Present Continuous Tense), երբ այն ցույց է տալիս մի գործողություն, որն ընթացքի մեջ է խոսելու պահին.

բ) ներկա շարունակական ժամանակը, երբ այն ցույց է տալիս պլանավորված գործողություն ապագայում կրկնություն.

գ) ներկա անորոշ (The Present Indefinite Tense) ժամանակը՝ սովորություն դարձած, պարբերաբար կրկնվող գործողություն ցույց տալու նշանակությամբ

դ) ներկա անորոշ ժամանակը անձին բնորոշող գործողություն ցույց տալու նշանակությամբ. ե) կրկնություն. կանոնավոր և մի շարք անկանոն բայերի անորոշ անցյալ (The Past Indefinite Tense) ժամանակը.

զ) անորոշ ապառնի ժամանակ (The Future Indefinite Tense), որն արտահայտում է մտադրություն, որոշումը կայացնելու ժամանակը.

է) անորոշ ապառնի ժամանակ, որն արտահայտում է կանխատեսում, խոստում ը կրկնություն. Can, may, must մոդալ բայերը ներկա ժամանակում իրենց հիմնական նշանակությամբ:

թ) Can մոդալ բայի անցյալի ձևը. 0

ժ) Can մոդալ բայը թույլտվության իմաստով.

Շարահյուսություն

ա) հարցական նախադասություններ. հարցերի տիպերը

բ) "It" դերանունով սկսվող անդեմ նախադասություններ

գ) ստորոգյալի համաձայնեցումը ենթակայի հետ դեմքով և թվով

6-րդ դասարան

Առաջարկվող ուսումնական թեմաներն են՝

- Իմ ընկերները և բարեկամները (անձի նկարագրությունը)
 - Իմ նախասիրությունները (երգ-երաժշտություն, համակարգչային խաղեր, ընթերցանություն)
 - Դպրոցական արձակուրդներ (իմ ազատ օրը)
 - Տարվա եղանակները
 - Հայաստան (Համառոտ աշխարհագրական տեղեկություններ, Երևան, Հարավ արևմտյան թաղամաս)
 - Իմ դպրոցը ("Մխիթար Սեբաստացի" կրթահամալիր)
 - Հայկական ազգային և կրթահամալիրային տոներ՝ ըստ կրթահամալիրային օրացույցի. (Մխիթար Սեբաստացու օրեր, Նոր տարի, Մր. Ծննդյան տոներ, Զատիկ, Չոն, Երեխաների պաշտպանության օր)

Յուրաքանչյուր թեմա կարող է ուսուցչի ընտրությամբ ունենալ մի քանի ենթաթեմա:

Օրինակ, «Մեր դպրոցը» թեման կարող է ունենալ հետևյալ ենթաթեմաները. իմ ուսուցիչը, մեր դասարանը, իմ սիրած ուսումնական առարկան, ինչն էմ սիրում մեր դպրոցում և ինչը չէմ սիրում:

6-

րդ դասարանի ուսումնական տարվա վերջում սովորողները ձեռք են բերում հետևյալ խոսքա յինկարողությունները

Ունկնդրելու և խոսելու կարողություններ

- լսելով հասկանալ և կազմել պարզ ընդարձակ նախադասություններ, երբ խոսքը ընտանիքի անդամներին ներկայացնելու, անձի արտաքինի պարզ նկարագրության մասին է.
- լսելով հասկանալ, ինքնուրույն կազմել և գործածել նախադասություններ, որոնցով կարելի է համեմատել շրջապատի առարկաների հատկանիշները, նկարագրել դպրոցական առօրյան.
- լսելով հասկանալ, կազմել և գործածել նախադասություններ, որոնցով կարելի է նկարագրել առօրյան, սիրելի զբաղմունքը, հայրենի քաղաքը կամ գյուղը, ամառային և ձմեռային արձակուրդները.
- հաջորդ օրվա գործողությունների նկարագիրը.
- ուզել մի բան՝ նշելով պահանջվող առարկայի տարբերակիչ հատկանիշները.
- տալ անցյալ օրվա տվյալ պահի գործողությունների նկարագիրը.
- հատուկ հարցեր տալով՝ լինել երկխոսությունը վարող ակտիվ կողմը.
- դասընկերոջը տրվող հարցերի միջոցով պարզել անցյալ օրը նրա դիտած մի որևէ մուլտֆիլմի համառոտ բովանդակությունը.
- անել հրավերներ և պատասխանել նման հրավերներին
- արտահայտել համաձայնություն կամ անհամաձայնություն ասված խոսքին.
- խնդրել գրուցակցին կրկնել վերջին նախադասությունը, եթե լավ չի լսել կամ հասկացել կամ ասել ավելի դանդաղ:

5-րդ և 6-րդ դասարաններում օգտագործվում են ուսումնական գործունեության նույն տեսակները S2S օգտագործմամբ:

Ընթերցելու կարողությունները

Որպես ընթերցանության տեքստեր կարող են օգտագործվել. նկարագրություն, պարզ տեղեկատվություն, հարցազրույց, գովազդ, հայտարարություն, մանկական երգեր, բանաստեղծություններ, կարճ պատմվածքներ, երկխոսություններ, պարզեցված (ադապտացված) հատվածներ գեղարվեստական երկերից, հեքիաթներից: Սովորողը պիտի կարողանա.

- կարդալ և հասկանալ 6-րդ դասարանի քերականական կառուցվածքներով և ծանոթ թեմաներով գրված տեքստերի ընդհանուր բովանդակությունը
- կարդալ և տեքստից հանել անհրաժեշտ տեղեկատվությունը
- կարդալ և հասկանալ տրամաբանական կապ ունեցող երկխոսություններ, կարճ հեքիաթներ, անձնական համառոտ նամակներ
- կարդալ և հասկանալ համակարգչային Microsoft word ծրագրի առավել կարևոր հրահանգները
- կարդալ և հասկանալ շնորհավորանքներ, հրավերներ:

Գրելու կարողությունները

- լրացնել անձնական տվյալներ պահանջող քարտ
- գրավոր պատասխանել կարդացած տեքստի բովանդակությանը վերաբերող հարցերին

- ծանոթ բառապաշարով անձ նկարագրել
- մի որևէ դեպքի մասին գրել ներկա և անցյալ ժամանակներով
- կարողանալ կարճ շարադրել լսված խոսքը, որը ծանոթ թեմայով է և ծանոթ բառապաշարով
- Կարողանալ գրել կրթահամալիրի լրիվ անունը
- կարողանալ 2-3 նախադասությամբ նկարագրել տարվա եղանակները:

Ուղղախոսություն

5-6-րդ դասարաններում սովորողները հնչյունների, երկբարբառների, վանկերի և բառերի ճիշտ արտասանությունը, շեշտադրումը սովորում են լսելով և կրկնելով դասավանդողի և ձայնագրությունների, աուդիոդասերի ճիշտ արտասանությունները :

Լեզվական նյութը

Բառապաշարը

Սովորողի վերարտադրողական բառապաշարը ավելանում է 100-120 նոր բառերով:

Ընդհանուր բառապաշարը հասնում է 300-350-ի:

Բառերը, եթե հնարավոր է, ներկայացվում են անգլերեն բացատրություններով, իսկ եթե՝ ոչ, տրվում է հայերեն թարգմանությունը : Բառերը ներկայացվում են իրենց բնորոշ խոսքային իրադրություններում՝ բառակապակցություններով և նախադասություններով:

Smart Notebook ծրագիրն ունի բառերի խմբավորման, դասակարգման և բազմընտրական առաջադրանքներ կազմող գործիքներ, որոնցից պետք է օգտվեն դասավանդողները:

Քերականություն

Ձևաբանություն

Գոյական (The Noun)

Բարդ գոյականների հոգնակի թվի կազմումը

Գոյականներ, որոնց հոգնակի և եզակի ձևերը նույնն են (sheep, fish, deer)

Անեզական գոյականներ (clothes, scissors, trousers, eye-glasses)

Որոշյալ և անորոշ հոդերի գործածումը մի քանի կայուն կապակցությունների հետ. անորոշ հոդ- in a low voice, in a loud voice, a great number of, for a long time, for a short time; որոշյալ հոդ – on the right, on the left, the other day, the day after tomorrow, go to the theatre; առանց հոդի- at breakfast, at dinner, at supper, after breakfast, at home, for breakfast, at sunrise, at sunset :

Թվական (The Numeral):

Քանակական և դասական թվականներ:

Lesson 10 – the tenth lesson ձևերը:

Ածական (The Adjective):

Ածականակերտ վերջածանցներ (-able, -y, -ful):

Կրկնություն. ածականների համեմատության աստիճանները:

Մակբայ (The Adverb):

Ժամանակի մակբայներ. early, late, soon, now, then, today, tomorrow, yesterday:

Հաճախականության մակբայներ – never, usually, always, often:

Տեղի մակբայներ Here, there, inside, outside, far, near:

Չափի մակբայներ – too, quite, very:

Ձևի մակբայներ- slowly, quickly, well, badly, hard:

Մակբայների համեմատության աստիճանները:

Դերանուն (The Pronoun):

Ստացական դերանունների բացարձակ ձևերը – mine, yours, his, hers, its, ours, theirs:
Some, any, every, no անորոշ դերանուններով կազմված որոշ բարդ ձևեր

Նախդիր (The Preposition):

Between – «երկուսի արանքում» իմաստով:

Among – երկուսից ավել իրերի կամ մարդ-կանց միջև:

Before – «նախքան» իմաստով:

Behind – «ետևում» իմաստով:

During – «ընթացքում» իմաստով:

For – «համար» իմաստով:

With – «հետ» իմաստով:

Բայ (The Verb):

Կրկնություն.

– ներկա անորոշ (The Present Indefinite) ժամանակը՝ սովորություն դարձած, պարբերաբար կրկնվող գործողություն ցույց տալու նշանակությամբ

– ներկա անորոշ ժամանակը, երբ այն գործածվում է անձին բնորոշող գործողություն ցույց տալու համար:

Ներկա անորոշ ժամանակը, երբ այն ցույց է տալիս ծրագրային, չվացուցակային, ժամանակացուցային գործողություն:

Կանոնավոր և անկանոն բայերի (30-40) անցյալ անորոշ ժամանակը:

Ներկա շարունակական (The Present Continuous Tense), երբ այն ցույց է տալիս ներկա ժամանակահատվածում, բայց ոչ անպայմանորեն խոսելու պահին կատարվող գործողություն:

Անցյալ շարունակական (The Past Continuous Tense) ժամանակը, երբ այն ցույց է տալիս մի գործողություն, որն ընթացքի մեջ է անցյալի մի պահի կամ ժամանակահատվածի ընթացքում:

Կրկնություն.

can, may, և must մոդալ բայերը իրենց հիմնական նշանակությամբ՝ ֆիզիկական և մտավոր կարողություն, թույլտվություն և անհրաժեշտություն:

Շարահյուսություն:

Կրկնություն.

– Հարցական նախադասություններ.

– Պայմանի շաղկապ – if

Պայմանի և ժամանակի երկրորդական նախադասություններ ունեցող բարդ ստորադասական նախադասություններ:

– Խնդրանք արտահայտող նախադասություններ, որոնք ձևով հարցական են՝ գործածելով «Could you ... please?» ձևը:

Գնահատում

Գնահատման տեսակները

1-3-րդ դասարանցիների աշխատանքը գնահատանիշով չի գնահատվում: Յուրաքանչյուր կիսամյակի վերջում ուսուցիչը սովորողի համար էլեկտրոնային տարբերակով լրացնում է աճի զարգացման բնութագիր: Սովորողները ուսման ընթացքում և կիսամյակը մեկ կատարում են ինքնաստուգման աշխատանքներ և մասնակցում են ստուգատեսներին: Սովորողի էլեկտրոնային թղթապանակում կամ հաշվետվության մեջ նշվում են իր անհատական կամ խմբային կատարած աշխատանքների հղումները:

Գնահատումը 1-3-րդ դասարաններում խրախուսական բնույթ է կրում: Սովորողները ստանում են զանազան մրցանակներ (տիպեր, աստղիկներ, Կեցցես-ներ և այլն):

4-9-րդ դասարաններում գնահատումը կատարվում է 10 բալլանոց համակարգով: Գնահատումը իրականացվում է էլեկտրոնային մատյաններում:

Կիսամյակային գնահատականները ձևավորվում են ընթացիկ աշխատանքին, կիսամյակային ստուգատեսներին, ուսումնա-հետազոտական ճամբարներին, նախագծերին մասնակցության արդյունքում:

Ստուգատեսներին սովորողները անհատապես կամ խմբային, դասավանդողի ղեկավարությամբ, ներկայացնում են իրենց կատարած աշխատանքները օտար լեզվով: Կարող են ներկայացվել նաև ընթացիկ աշխատանքները, որոնք նախկինում տեղադրվել են Կրթահամալիրի կայքում /թարգմանություններ, ուսումնական առաջադրանքներ և այլն/:

2-3-րդ դասարաններում ընթացիկ ինքնաստուգումները իրականացվում են ուսուցչի հայեցողությամբ:

3-րդ դասարանի վերջում անցկացվում է ամփոփիչ ստուգարք:

Ուսումնական տարվա յուրաքանչյուր կիսամյակի ավարտին սովորողները մասնակցում են «**Ես կարող եմ**» (**I can**) ստուգատեսին: Ստուգատեսի արդյունքները հրապարակվում են սովորողների բլոգներում:

Ուսումնա-հասարակական աշխատանքներ

Սովորողները մասնակցում են կրթահամալիրում իրականացվող բոլոր ուսումնահասարակական ծրագրերին. այդ ընթացքում զարգանում է տվյալ բնագավառին բնորոշ բառապաշարը /կենդանիների խնամք, շրջակա միջավայրի խնամք և բարելավում, աշխատանք խոհանոց-լաբորատորիայում, բակային աշխատանքներ, բույսերի և կենդանիների խնամք, գրքերի վերանորոգում և այլն: Այս աշխատանքների արդյունքում ստեղծվում են ուսումնական նյութեր, և կատարվում են հետազոտական աշխատանքներ: Լավագույն աշխատանքները տեղադրվում են կրթահամալիրի կայքում կամ դպրոցների ենթակայքերում: Արդյունքները ներկայացվում են անհատական բլոգներում կամ ենթակայքերում:

Ուսումնական ճամփորդություններ

Ուսումնական ճամփորդությունները իրականացվում են համագործակցելով այլ առարկաների դասավանդողների հետ. օրինակ՝ կենդանաբանական այգի, բուսաբանական այգի, թատրոններ, թանգարաններ, ցուցահանդեսներ և այլն: Ճամփորդություններից հետո սովորողները դասավանդողի հետ պատրաստում են օտար լեզվով ուսումնական նյութ /կենդանական, բուսական և այլ բառարաններ, հետաքրքիր նյութեր անզլերեն, ռադիո և տեսալուրեր և այլն/:

Սովորողները դասավանդողի հետ կարող են կատարել վիրտուալ ուսումնական ճամփորդություն՝ տարբեր կայքերի միջոցով: Նրանք կարող են վիրտուալ այցելություն կատարել Անգլիա, ԱՄՆ և այլն, թանգարաններ, գրադարաններ:

Գրականություն

1-ին դասարանում դասավանդումը իրականացվում է առանց դասագրքերի, օգտագործվում են ուսումնական կայքեր, հատուկ համակարգչային խաղեր:

/Օգտագործվող կայքեր-

www.genkienglish.net www.tolearnenglish.com www.angles365.com , Կրթահամալիրում ստեղծված —English 1-2 CD, որը ներառում է 8 թեմատիկ դաս՝ համապատասխան ծրագրի պահանջներին: Յուրաքանչյուր դաս ներառում է անհրաժեշտ բառապաշար, երգացանկ, ոտանավորներ և խաղեր/:

2-րդ դասարան-Գ.Գասպարյան-3

3-րդ դասարան- 1-ին կիսամյակ-Ապրելյան —ABC, 2-րդ կիսամյակ՝ Գասպարյան -4

4-րդ դասարան-Գասպարյան-4, Round Up-2

5-րդ դասարան-Գասպարյան-5, Round Up-2 /շարունակություն/, Верешагина-3 /Reader/,

6-րդ դասարան-Верешагина-IV

Որպես լրացուցիչ գրականություն կարող են գործածվել

1. Macmillan հրատարակչության դասագրքերը, գիրք-տետրերը /Bravo, Way Ahead/
2. Մ եղիագրակ անու թյուն

7-9-րդ դասարաններ

Նպատակը

Միջին դպրոցում անգլերենի դասավանդումը նպատակաուղղված է սովորողի բանավոր և գրավոր հաղորդակցմանը, միջմշակույթային փոխըմբռնմանը, ոչ հայախոս անձանց հետ շփվելու, այլ երկրների ու ժողովուրդների քաղաքակրթությանն ու մշակույթին հաղորդակցվելու, դրանց լավագույն արժեքները յուրացնելու և հայերենով արտահայտելու, ինչպես նաև հայալեզու մշակույթը այլ ժողովուրդներին մատչելի դարձնելուն:

Խնդիրները

Հաղորդակցական իրազեկության զարգացումը ըստ անգլերենի իմացության համաեվրոպական մակարդակների խոսքային գործունեության 4 ուղղություններով՝ լսելով հասկանալը, խոսելը, կարդալով հասկանալը և գրելը.

7-րդ դասարան (A1.1-A1.2)

8-րդ դասարան (A1.2-A2.1)

9-րդ դասարան (A1.3-A2.2)

Մանկավարժական մոտեցումներ

- Օտար լեզվի ուսուցումն իրականացվում է **նախագծային աշակերտակենտրոն** ուսուցման սկզբունքներով:
- Դասավանդող-սովորող, սովորող-սովորող իրավիճակային **երկխոսությունների ստեղծում, իմաստի որոնում**. (իմաստը չի տրվում պատրաստի ձևավորված վիճակում: Դրան աշակերտը հասնում է որոնելով, կշռադատելով):
- Սովորողներն իրենք են **եզրահանգում** անում, դասավանդողը տալիս է առաջնային գաղափարներ:
- Հաշվի է առնվում **սովորողի կարծիքը**:
- Լեզվամտածողության զարգացումը կազմակերպելու համար դասավանդողն աշխատում է **համագործակցային և խմբային հետազոտական** մեթոդով.

- Նախագծերի թեմաները համապատասխանում են օտար լեզուների առարկայական ծրագրերի թեմաներին՝ հաշվի առնելով նաև կրթահամալիրի ուսումնական օրացույցի այն կետերը, որոնցով հնարավոր կլինի համալրել ու հարստացնել անգլերենի առարկայական ծրագիրը:

Ուսումնական միջավայր

Նյութական միջավայր

- թափանցիկ, ինքնասպասարկվող, ներառող
- 1-1 պլանշետ/նոթբուք/նեթբուքներով ուսուցմամբ դասարաններ,

Կրթահամալիրի բոլոր կաբինետները, ընթերցասրահները, լաբորատորիաները, արհեստանոց-արվեստանոցները աշխատում են անլար ինտերնետային WIFI ծածկույթով:

Անգլերենի դասավանդման նյութական միջավայր են նաև բակը, դաշտային պայմանները, բնության և պատմության հուշարձանները, թանգարանները, ցուցահանդեսները, ուսումնական ճամբարները, ստեղծագործական հավաքները:

Մեդիա միջավայր

msh.am կայք, մեդիա գրադարան, TV

Դասավանդողների և սովորողների ուսումնական բլոգներ, մանկավարժական/պատանեկան/մանկական էլեկտրոնային ամսագրեր

Սոցկայքեր՝ Facebook, YouTube

Տանը նույնպես, սովորողը պետք է ունենա համացանցին միացված համակարգիչ, ձայնագրիչ, թվային ֆոտոխցիկ և այլ միջոցներ, որոնք կարող են նպաստել հանձնարարությունն ավելի արդյունավետ կատարելուն:

Ուսումնական աշխատանքի կազմակերպում

Ուսումնական աշխատանքի կազմակերպումը նպատակաուղղված է ուսումնառության դրական դրդապատճառների ձևավորմանը: Դրական դրդապատճառները ձևավորվում են ուսումնական գործունեության հետևյալ ձևերով.

- Կառուցողական մանկավարժության սկզբունքներով կազմակերպվող ուսումնական պարապմունք
- Ուսուցում ըստ նախասիրությունների
- Ուսումնական ճամփորդություն
- Մասնակցություն ստեղծագործական հավաքներին և ստուգատեսներին
- Բլոգավարություն
- Էլ.նամակագրություն
- Թարգմանություններ, օտարալեզու հրապարակումներ կայքում
- Ուսումնական այլ նախագծերի իրականացում

Կապը այլ բնագավառների հետ

- Բազմագործառնության իրականացում
Անգլերենի ուսուցումը իրականացվում է այնպես, որ դա լինի և՛ որպես ուսուցման

նպատակ, և՛ որպես միջոց՝ գիտելիքների տարբեր բնագավառներից տեղեկություններ քաղելու:

- Միջառարկայական ինտեգրում
Անգլերենը գործածվում է տարբեր ուսումնական առարկաներից ուսումնական նախագծեր իրականացնելիս՝ օտարալեզու աղբյուրներից տեղեկություններ հայթայթելու և դրանք թարգմանելու միջոցով:

7-րդ դասարան

Լեզվական նյութ

Խոսքի հնչյունաբանությունը

- ունկնդրումով կարողանալ ճանաչել և արտասանել ուսուցանվող բոլոր բառերի հնչյունները և հնչյունակապակցությունները
- Կարողանալ արտասանել ուսուցանվող բառերը ճիշտ շեշտադրումով (օժանդակ բառերի թույլ և ուժեղ ձևերը);
- կարողանալ ունկնդրումով տարբերել երկար և կարճ ձայնավորները (ship-sheep
- Պատմողական, հրամայական և հարցական նախադասությունների հնչերանգի իմացությունը

Բառապաշարը

Առաջարկվող թեմաների շրջանակներում ունենալ 400-500 բառային միավորների վերարտադրողական բառապաշար:

Առաջարկվող ուսումնական թեմաներն են.

- Ես և իմ շրջապատը
- Իմ ընտանիքը, մեր ընտանեկան տոները
- Մեր դպրոցը
- Իմ օրը
- իմ սիրելի զբաղմունքը
- Նախաճաշ, ճաշ, ընթրիք
- Ժամանակ, շաբաթվա օրեր, ամիսներ և տարվա եղանակներ
- Ամառային և ձմեռային արձակուրդներ
- Մեր բնակարանը
- Մեր քաղաքը, թաղամասը, բակը
- Իմ ընկերը
- Մեր ազգային տոները

Յուրաքանչյուր թեմա կարող է ուսուցչի ընտրությամբ ունենալ մի քանի ենթաթեմա:

Օրինակ, “Մեր դպրոցը” թեման կարող է ունենալ հետևյալ ենթաթեմաները. իմ ուսուցիչը, մեր դասարանը, իմ սիրած ուսումնական առարկան, ինչն եմ սիրում մեր դպրոցում և ինչը չեմ սիրում:

Կրթահամալիրում իրականացվում է նաև նախագծային ուսուցում, որի թեմաները կարող են պայմանավորված լինել Կրթահամալիրի տոնացույցով, օտար լեզվի առարկայական տոնացույցով, ինչպես նաև առարկայից բխող այլ թեմաներով: Նախագծերը կարող են լինել երկարաժամկետ և կարճաժամկետ և դրանց արդյունքը հրապարակվում է համացանցում:

Քերականություն

-

Ձևաբանություն

Գոյական անուն

- գոյականի հոգնակի թվի կազմումը “s” և “es” վերջավորությամբ
- “**man, woman, child, tooth, foot**” գոյականների հոգնակի թվի կազմումը
- անձ ցույց տվող գոյականների ստացական հոլովի կազմումը և գործածումը
- “of phrase” –ի գործածումը պատկանելիություն նշելու համար
- “**what, who, whose**” հարցական դերանունների գործածումը գոյականներին հատուկ հարց ուղղելու համար
- **անորոշ և որոշյալ հոդերի** ամենապարզ գործածումը հասարակ, հատուկ, հաշվելի և անհաշվելի գոյականների հետ
- **some** և **any** անորոշ դերանունների գործածումը հաշվելի և անհաշվելի գոյականների հետ
- գոյականաստեղծ “**er**” վերջածանցի կազմումը և գործածումը

Ածական անուն

- ածականների շարադասությունը
- ամենահաճախ հանդիպող ածականների գործածումը երեխաներին շրջապատող առարկաների անվանումների հետ
- միավանկ և բազմավանկ ածականների համեմատական աստիճանների կազմումը և գործածումը “**er, est**” վերջավորություններով և “**more, most**” բառերով
- “**good, bad, many, much, little**” բառերի համեմատական աստիճանների կազմումը և գործածումը
- **which, what kind of** բառերի գործածումը ածականներին հատուկ հարցեր ուղղելիս

Թվական անուն

1-100 քանակական և դասական թվականների վերարտադրողական իմացությունը

Դերանուն

- Անձնական դերանունների վերարտադրողական իմացությունը (**I, you, he, she, it, we, you, they** և **me, you, him, her, it, us, you, them**)
- ստացական դերանունների վերարտադրողական իմացությունը (**my, your, his, her, its, our, your, their**)
- ցուցական դերանունների վերարտադրողական իմացությունը (**this-these, that-those**)
- հարցական դերանունների վերարտադրողական իմացությունը (**what, who, whom, whose, which**)
- անորոշ դերանունների վերարտադրողական իմացությունը (**some, any**)

Բայ

- “**to be, to do, to have**” բայերի գործածումը բոլոր դեմքերի և թվերի համար ներկա, անցյալ և ապառնի ժամանակներում
- Ներկա անորոշ ժամանակաձևի վերարտադրողական իմացությունը **usually, always, often, every day, sometimes** մակբայների հետ
- ներկա շարունակական ժամանակաձևի վերարտադրողական իմացությունը գործողությունը խոսելու պահին կատարվելու նշանակությամբ
- անցյալ անորոշ ժամանակաձևի վերարտադրողական իմացությունը ժամանակ ցույց տվող հետևյալ բառերի և բառակապակցությունների հետ` **yesterday, , last week, two weeks ago, last Sunday, in 2005**; ամենահաճախ հանդիպող 20-25 անկանոն բայերի անցյալ ձևերի վերարտադրողական իմացությունը
- անորոշ ապառնի ժամանակաձևի վերարտադրողական իմացությունը
- անցյալ շարունակական ժամանակաձևի վերարտադրողական իմացությունը
- **can, may and must**; մոդալ բայերի վերարտադրողական իմացությունը

Մակբայ

- **here, there, near, far, where** տեղի մակբայների գործածումը
- **when, now, then, before and after** ժամանակի մակբայների գործածումը
- **little, much, very** չափի մակբայների գործածումը
- **too** և **also** մակբայների գործածումը
- մակբայների տեղը նախադասության մեջ
- ամենահաճախ հանդիպող մակբայների համեմատական աստիճանների կազմելու և գործածման վերարտադրողական իմացություն
- մակբայաստեղծ վերջածանց **ly**-ին

Նախդիրներ

on, in, under, to, from, about, for, till, at

Շաղկապներ

and, or, because, as, when, after

Շարահյուսություն

- Պարզ համառոտ և պարզ ընդարձակ նախադասությունների հարցական ր ժխտական ձևերի կազմումը և կարճ պատասխաններ տալու հմտությունները
